



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Պատվիրակություն Հայաստանում

Քաղաքական, տնտեսական, մամուլի և տեղեկատվության բաժին

Երևան, հունվարի 28, 2016թ.

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Զեկույց Արտոնությունների ընդհանրացված համակարգ պլյուսի (GSP+) վերաբերյալ

Այսօր Եվրամիությունը հրապարակել է Արտոնությունների ընդհանրացված համակարգ պլյուսի (GSP+) վերաբերյալ համապարփակ զեկույց 2014 – 2015թթ. ժամանակահատվածի համար: Սույն զեկույցը կարևորագույն օրինակ է առ այն, թե ինչպես է Եվրոպական միությունը ամրապնդում առևտրային հարաբերությունները գործընկեր երկրների հետ ինչպիսին Հայաստան է՝ միննույն ժամանակ պահանջելով կայուն զարգացում և կառավարման ոլորտի բարեփոխումների իրականացում:

ԵՄ-ի Արտոնությունների ընդհանրացված համակարգը (GSP) մշակված է՝ միջազգային առևտրի միջոցով աջակցելու գործընկեր պետությունների տնտեսական զարգացմանը: Այն սահմանում է նվազեցված կամ զրոյական սակագներ ԵՄ կատարվող ներկրումների համար՝ ԵՄ շուկաներ ավելի հեշտ հասանելիություն տրամադրելով: Ռեժիմն օգնում է գտնել նոր գործարար հնարավորություններ և առևտրային եկամուտ ունենալ, ինչը նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, աղքատության կրճատմանը և կայուն զարգացմանը շահառու երկրներում:

Մասնավորապես, Կայուն զարգացման և Կառավարման ոլորտի բարեփոխումների իրականացման Առանձնահատուկ Ռեժիմը՝ GSP+ տրամադրում է լրացուցիչ աջակցություն [տարիֆների բացարձակ վերացման միջոցով] այն երկրներին, որոնք վավերացնում և արդյունավետ իրականացնում են մարդու իրավունքների, աշխատանքային իրավունքների, պատշաճ կառավարման և բնապահպանության վերաբերյալ 27 առանցքային միջազգային կոնվենցիաները: Բարեփոխված GSP+ համակարգի 2014 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց ի վեր ԵՄ-ն իրականացնում է **ընդլայնված մշտադիտարկում** պարտադիր հանձնառություններին շահառու երկրների համապատասխանության ուղղությամբ՝ սատարելով երկրների ջանքերին նշյալ կոնվենցիաների իրականացման գործում:

Հայաստանն օգտվում է բարեփոխված GSP+ համակարգից դրա ուժի մեջ մտնելուց ի վեր:

Բարեփոխված GSP+ համակարգի գործարկման վերաբերյալ այս առաջին կիսամյակային զեկույցը ներկայացնում է, թե ինչպես է Հայաստանը իրականացրել պարտադիր հանձնառությունները, որոնք որոնք ստանձնել է որպես GSP+-ին անդամակցելու պայման: Այն հստակ անդրադառնում է Հայաստանի կողմից համապատասխան միջազգային կոնվենցիաների վավերացմանը և դրանց արդյունավետ իրականացմանը, դրանց վերաբերյալ հաշվետվողականությանը մշտադիտարկման միջազգային մարմիններին և ԵՄ-ն հետ համագործակցությանը մշտադիտարկման ընթացքում:

Սույն զեկույցը եզրակացնում է, որ GSP+ մշտադիտարկման առաջին փուլի ընթացքում Հայաստանը **ուղղակի ջանքեր է ցուցաբերել՝** համապատասխանելու պարտադիր հանձնառություններին: Միաժամանակ Հայաստանը պետք է շարունակի և որոշ դեպքերում ավելացնի իր ջանքերը կոնվենցիաների իրականացման բարելավման ուղղությամբ, (ոչ պակաս կարևորությամբ ձգտելով ապահովել Հայաստանի քաղաքացիների համար մարդու իրավունքների ոլորտում բարելավումների ընկալումն առօրյա կյանքում) որպեսզի կարողանա շարունակել օգտվել GSP+ համակարգից:

Մասնավորապես՝ 2014-2015 թթ. Հայաստանը համակողմանի ջանքեր է գործադրել՝ GSP+ ցուցանիշների համակարգում հատկորոշված այն թերություններին անդրադառնալու, որոնք առաջնայնորեն վերաբերում են օրենսդրական բացերին կամ անհամապատասխան օրենսդրությանը և իրազեկության բարձրացմանը: Մինևույն ժամանակ Հայաստանի կառավարությունը պետք է շարունակի ակտիվացնել իր ջանքերը՝ լուծելու մարդու իրավունքների մի շարք դժվար հաղթահարելի խնդիրներ. մասնավորապես կապված դատական համակարգի և ընդհանրապես քաղաքական համակարգի անկախության և բարեվարքության, խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից պաշտպանող անբավարար օրենսդրական և իրավապահ շրջանակների հետ, ինչպես նաև կոռուպցիայի, փոքրամասնությունների նկատմամբ խտրականության, կանանց նկատմամբ խտրականության և բռնության, ինչպես նաև մանկական աղքատության վերաբերյալ անբավարար օրենսդրական հենքերի հետ: Ինչ վերաբերում է աշխատանքային իրավունքներին, Հայաստանի օրենսդրությունը և պաշտոնական աշխատաշուկայի աշխատակարգերը լայն իմաստով համապատասխանում են Աշխատանքի միջազգային կազմակերպության հիմնարար կոնվենցիաներին: Այնուամենայնիվ, երկուսն էլ պետք է բարելավվեն մի շարք առումներով, մասնավորապես գործատուների և աշխատողների համար միավորման ազատության, աշխատանքային պայմանների ավելի կանոնավոր և արդյունավետ ստուգման և աշխատավայրում

խորականության կանխման կետերով, զուգահեռ Հայաստանի ջանքերին՝ ուղղված չկարգավորվող զբաղվածությունը նվազեցնելուն: Հայաստանը շարունակում էր ջանքեր գործադրել՝ պաշտպանելու շրջակա միջավայրը իրավական շրջանակի ներդրման և մի քանի ոլորտներում (օրինակ՝ օդի, ջրի, բնության պահպանություն) կոնկրետ օրենսդրության ներմուծման միջոցով: Ընդհանուր առմամբ, Հայաստանը մեծապես օգտվում է բնապահպանությանը և կլիմայի փոփոխությունների դեմ պայքարին ուղղված ԵՄ զգալի աջակցությունից և մտադիր է շարունակել այդպիսի գործելառճը՝ նաև ի նպաստ այս ոլորտներում իր հետագա առաջնահերթությունների և նպատակների:

Զեկույցում բերված փաստերի հիման վրա 2016 թվականին՝ մշտադիտարկման հաջորդ, երկամյա ժամանակահատվածի սկզբում կհատկորոշվեն առաջնային գործողությունները: Թեև դրանք կարող են արտացոլել խորն արմատացած և երկարաժամկետ խնդիրներ, այս թերությունների հաղթահարման ուղղությամբ կոնկրետ առաջընթացի մասին հստակ ապացույցները կակնկալվեն մշտադիտարկման հաջորդ ժամանակահատվածում:

Հայաստանի ստանձնած հանձնառությունների համապատասխանեցման ուղղությամբ կարողությունները զարգացնելու նպատակով՝ հնարավոր է սկսել մի շարք ծրագրեր:

Տարբեր գործընկերների հետ սերտ համագործակցությունն էական է GSP+-ի հաջողության համար: Բացի Հայաստանի իշխանություններից, ԵՄ-ն աշխատում է նաև մարդու իրավունքների և զբաղվածության տեղական և միջազգային փորձագետների հետ և ակտիվ երկխոսության մեջ է գտնվում Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ: Շատ դեպքերում քաղաքացիական հասարակությունը ողջունել է GSP+ ռեժիմը՝ որպես փոփոխությունները խթանող միջոց:

Հայաստանի կողմից GSP+ պարտավորությունների բավարարման վերաբերյալ հաջորդ զեկույցը կիրապարակվի մինչև 2017թ. նոյեմբերը:

Կոնվենցիաները, որոնք մշտադիտարկվում են GSP+ ռեժիմի ներքո, դասվում են հետևյալ չորս թեմատիկ խմբերի.

1) **մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ** յոթ կոնվենցիա (ընդդեմ խոշտանգումների, ընդդեմ խտրականության, կանանց, երեխաների և փոքրամասնությունների իրավունքների մասին, քաղաքացիական և քաղաքական իրավունքների, ներառյալ արտահայտվելու և միավորման ազատության մասին, արդար դատական քննության իրավունքի և դատական համակարգի անկախության մասին),

2) Աշխատանքի միջազգային կազմակերպության ութ կոնվենցիա **աշխատանքային իրավունքների** վերաբերյալ (ընդդեմ հարկադիր աշխատանքի և մանկական աշխատանքի, աշխատողների՝ հավաքականորեն կազմակերպվելու և քանակցելու մասին, ընդդեմ աշխատավայրում խտրականության և տղամարդկանց և կանանց համար հավասարաչափ վճարման մասին);

3) ութ կոնվենցիա **բնապահպանության և կլիմայի փոփոխությունների** վերաբերյալ (մշտադիտարկելու վտանգավոր թափոնները և վնասակար աղտոտիչները, ապահովելու կենսաբազմազանությունը և պաշտպանելու վտանգված տեսակները և պայքարելու կլիմայական փոփոխությունների դեմ); և

4) չորս կոնվենցիա **պատշաճ կառավարման** վերաբերյալ (աջակցելու երկրներին ամրապնդել իրենց կառավարման համակարգն ու հաստատությունները՝ ՄԱԿ-ի կոնվենցիան ընդդեմ կոռուպցիայի, ինչպես նաև ՄԱԿ-ի երեք կոնվենցիա, որոնք ձգտում են վերահսկել թմրանյութերի ապօրինի շրջանառությունը):

GSP+ ռեժիմը զգալի առևտրային և տնտեսական նշանակություն ունի Հայաստանի համար: 2014 թ մոտավորապես 60 միլիոն եվրո (համարժեք 32 միլիարդ ՀՀ դրամին) արժողությամբ արտահանումների համար, որը կազմում է Հայաստանից ԵՄ արտահանումների ողջ ծավալի 26%-ը (228 միլիոն եվրո կամ 120 միլիարդ ՀՀ դրամ), Հայաստանն օգտվել է GSP+ ռեժիմից: Հետևաբար այս արտահանումներն իրականացվել են զրոյական սակագներով: Իրավիճակը բարելավվեց 2015թ առաջին կեսին, երբ 58 միլիոն եվրո (31 միլիարդ ՀՀ դրամ) արժողությամբ արտահանումները Հայաստանից դեպի ԵՄ օգտվեցին GSP+ ռեժիմից: Սա արդեն կազմում է Հայաստանից ԵՄ արտահանման ողջ ծավալի 41 %-ը (144 միլիոն եվրո կամ 76 միլիարդ ՀՀ դրամ):

Բացի այդ, Հայաստանից ԵՄ արտահանողների զգալի մեծամասնությունը, որոնք կարող էին դիմել, դիմել են, և նրանց շնորհվել է շուկայի հասանելիություն առանց մաքսատուրքի վճարման: Հայաստանն օգտվում է GSP+ ռեժիմից հետևյալ ոլորտների արտահանումների համար՝ հագուստ, ալյումին, խեցգետին, հյութեր, ջեմեր և նպարեղեն, ընկուզեղեն և այլ ընդդեմ:

Տես նաև՝

http://europa.eu/rapid/press-release_IP-16-169_en.htm

<http://trade.ec.europa.eu/doclib/press/index.cfm?id=1443>

Հասցե՝ Ֆրիկի 21, 0002, Երևան, Հայաստան
Այցելումների համար մուտքը Պոռչյան փողոցից
Հեռ.՝ (374 10) 54 64 94, ֆաքս՝ (374 10) 54 64 95

Delegation-Armenia@eeas.europa.eu

http://eeas.europa.eu/delegations/armenia/index_en.htm